



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Ջորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու.և մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՒՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍՏԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Սարգսյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ և ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Սիրարփի Կարապետյան
Երևանի պետական համալսարան

Գոյականական բաղադրիչներով համադրական բարդությունները շատ տարածված են հայերենում և անգլերենում: Այս կաղապարով և՛ համադրական, և՛ վերլուծական բարդություններ կան: Հոդվածում քննվում են գոյական + գոյական կաղապարով համադրական բարդությունների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները հայերենում և անգլերենում: Քննության են առնվում նաև գոյական + գոյական կաղապարով բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները:

Բանալի բառեր. *բառակազմություն, զուգադրական քննություն, բարդություն, կաղապար, բառաբարդում, անգլերեն, հայերեն, գոյական, շարահյուսական, իմաստային:*

Ներածություն

Հայերենում և անգլերենում բառակազմական տեսակետից բավականին արդյունավետ են Գ+Գ (N+N) կաղապարով բարդությունները: Առհասարակ, այս կամ այն կաղապարը բառակազմական տեսակետից «կենսունակ» է այն դեպքում, երբ դրանով կազմված նոր բառերը հեշտությամբ են ըմբռնվում տվյալ լեզվով խոսող հանրության բոլոր անդամների կողմից, բոլոր դեպքերում «ընդունելի» են և ճանաչվում են որպես տվյալ լեզվին պատկանող միավորներ (Akhmanova 1973):

Որպես արդյունք՝ այդ կաղապարով հիմնականում կազմվում են նոր *գոյականներ* և *ածականներ*՝ բաղադրիչների համագոր և անհամագոր հարաբերությամբ, երբեմն նաև՝ *մակբայներ*:

Համագոր հարաբերությամբ Գ+Գ բաղադրություններ են, օրինակ՝ *ահասարատ, աղուհաց, արդուզարդ, բերնեբերան, երփներանգ, թուքումուր, ժամառժամ, լացուկոծ, կահկարասի, նկարապատկեր, քարուքացախ* և այլն:

Անհամագոր կամ ստորադասական հարաբերությամբ Գ+Գ բաղադրությունների բաղադրիչների միջև մեծ մասամբ առկա է հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն, սակայն կան նաև որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությամբ կազմություններ:

Գոյականական բաղադրիչներով համադրական բարդությունների քննությունն էական նշանակություն ունի ոչ միայն երկու լեզուների միջև տիպաբանական ընդհանրությունների և տարբերությունների որոշման առումով, այլև լեզուների դասավանդման հարցում:

Հողակապավոր և անհողակապ բարդություններ

Ինչպես հայտնի է, բարդության մեջ բաղադրիչները կարող են միանալ հողակապով և առանց հողակապի, «ըստ որում, որևէ կանոն չկա, որով կարողանայինք որոշել, թե երբ պետք է բարդ բառի սերող և բաղադրող հիմքերը կապակցվեն հողակապով, իսկ երբ՝ առանց հողակապի: Կա մասամբ գործող մի կանոն, որի համաձայն հողակապ չի դրվում, եթե երկրորդ բաղադրիչը ձայնավորով է սկսվում: Բայց ունենք՝ էլեկտրաախտորոշում, էլեկտրաարդուկ, ինքնաապահովագրել, ինքնաարդարացում և այլն» (Գալստյան 2002):

Ժամանակակից հայերենում հողակապի դեր է կատարում հիմնականում *ա* ձայնավորը, սակայն հողակապի դերով հանդես է գալիս նաև *է* ձայնավորը ¹, որը մի դեպքում հայտնի ի+ա>ե հնչյունափոխության արդյունքն է, երբ առաջին բաղադրիչի վերջին ձայնավորը, ձուլվելով *ա* հողակապին, տալիս է *ե*, ինչպես՝ *այգի+ա+գող=այգեգող*, *գինի+ա+տուն=գինետուն*, *ոսկի+ա+վարս=ոսկեվարս* և այլն, իսկ մյուս դեպքում այն առաջանում է համաբանության արդյունքում՝ վերոնշյալ ձևերի նմանակությամբ, ինչպես՝ *բաժնեգին*, *բաժնետեր*, *ծաղկեպսակ*, *հաշվեմատյան* և այլն: «Նման բաղադրությունները սերող հիմքում չունեն ի վերջնահնչյունը, հետևաբար հիշյալ հնչյունափոխությունը պետք է որ անհնար լիներ, սակայն մի շարք դեպքերում դրանք ոչ միայն գիտակցվում են որպես կանոնական և ընդունելի ձևեր, այլև դուրս են մղել սպասելի ճիշտ ձևերը» (Մաքաչետյան 2006):

Մեկ այլ դեպքում *ե* (*է*) ձայնավորը նույնանում է հողակապի հետ գրաբարի բացառական հոլովով կազմված կրկնավորներում, ինչպես՝ *դարեդար*, *դոնեդուռ*, *տնետուն*, *քարեքար* և այլն ²:

Հողակապը մեծ դեր է խաղում հայերենի բառակազմության գործընթացում: Գ+Գ կադապարով բարդությունների շարքում բազմաթիվ են **հողակապավոր** տեսակները, օրինակ՝ *ագռավաձագ*, *գարեջուր*, *կապարագույն*, *հարցատարափ*, *մայրագործով*, *մտապատկեր*, *նավարանտ*, *նարնջահյութ*, *սփյուռքահայ*, *րոպեասլաք* և այլն:

Անհողակապ բարդությունները լինում են երկու տեսակի. 1) ձայնավորասկիզբ երկրորդ բաղադրիչներով, ինչպես՝ *ագռավագի*, *ագռավաք*, *ականջող*, *բախտընկեր*, *եղջերոսկր*, *ընձառյուծ*, *ժամերգ*, *լուսնեղջուր*, *կատակերգ* և այլն, 2) բաղաձայնասկիզբ երկրորդ բաղադրիչով, ինչպես՝ *անտառպուրակ*, *ամպհովանոց*, *աներձագ*, *արևկայթ*, *արևկող*, *ձնծաղիկ*, *շենյուն*, *ջրհոր*, *վզկապ* և այլն:

Բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները

Գ+Գ կադապարով բարդությունների մեջ առանձնանում են *որոշիչ-որոշյալի* և *հատկացուցիչ-հատկացյալի* շարահյուսական կապակցությամբ տեսակները:

Բաղադրիչների **որոշիչ-որոշյալ** շարահյուսական հարաբերությամբ բարդություններն ամենագործունն են եղել հայերենի պատմական զարգացման ողջ ընթացքում: Այդպիսիք են, օրինակ՝ *ածխանկար*, *արյունաձեռք*, *բազալտաքար*, *ժամագոտի*, *ծովամարտ*, *կանեփաճոպան*, *նշտարածն*, *քարատող* և այլ բարդությունները:

Հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերությամբ բարդություններ են, օրինակ՝ *աղամախնձոր, անձրևաջուր, բայսահիմք, բանտախուց, գազաթամաս, գայլահաչ, գետնախորշ, զգեստապահարան, ծնրակապ, կամրջանեցուկ, քաղաքագլուխ, քարոզգիրք* և այլն:

Գ+Գ կաղապարով կազմված բարդություններ

Գ+Գ կաղապարով, ինչպես արդեն վերևում նշել ենք, կազմվում է.

ա) **գոյական**, որն արտահայտում է մի նոր առարկայի իմաստ, ինչպես՝ *գետնախորշ, դաշտանկար, եղեգնաշաքար, հատակամաքրիչ, հացաբաժին, ձայնադարան, մարդակապիկ, մեղրամուս, մտապատրանք* և այլն,

բ) **ածական**, որն արտահայտում է մի նոր հատկանիշ, ինչպես՝ *եղեգնիրան, լուսաբիր, լուսաբոց, կամրջածն, կայծակնաթուր, ձյունագգեստ, մարմնագույն, վարդերանգ* և այլն,

գ) **մակբայ**. դրանք հիմնականում կրկնավոր համադրական բարդություններ են, որոնք բաժանվում են երկու խմբի (Կարապետյան 2005). 1. միևնույն գոյականի **ուղիղ** ձևի կրկնությամբ կազմված կրկնավոր մակբայներ՝ *գունդագունդ, դեզադեզ, դողիդող, կերպակերպ, շեղջաշեղջ* և այլն, 2. միևնույն գոյականի **տարբեր** հոլովածների կրկնությամբ կազմված կրկնավոր մակբայներ՝ *գյուղեգյուղ, դարեդար, դռնեդուռ, ծայրեծայր, կուզեկուզ, շարեշար, պատեպատ, տարեցտարի, տնետուն, օրստօրե* և այլն:

Գ+Գ կաղապարով կազմությունները գերազանցապես երկբաղադրիչ են, սակայն կան նաև եռաբաղադրիչ կազմություններ՝ իբրև կանոն *երկբաղադրիչ լրացում+գերադաս անդամ* և *լրացում+երկբաղադրիչ գերադաս անդամ* կաղապարներով (Մարտիրոսյան 2007):

Եռաբաղադրիչ բարդություններ են, օրինակ՝ *ածխաբեռնանավ, երկրաջրոլորտ, ծխախոտատերև, ծխախոտափող, հանքագործարանատեր, հովտածիծաղասաղարթ, հորեղբորորդի, մորաքեռաղջիկ, մորաքեռորդի* և այլն, սակայն, միևնույն է, եռաբաղադրիչ բարդությունները ևս հանգում են երկբաղադրիչ տեսակի, քանի որ բառի մեջ ամեն դեպքում առանձնանում են երկու հիմքեր՝ *ածխաբեռնանավ = ածուխ + բեռնանավ, հանքագործարանատեր = հանքագործարան + տեր*: Այս առումով, ինչպես իրավացիորեն նշում է Հ. Աճառյանը, հայերենը «թեև շատ հարուստ է բարդությանց կողմից, բայց պահում է չափավորություն» (Աճառյան 1957), որը նշանակում է, որ երկուսից ավելի բաղադրիչներով բարդ բառերը սակավաթիվ են: Ուշագրավ է նաև Գ. Ջահուկյանի դիտարկումը. «...բարդության, հատկապես հայերենի բարդության, բնական տիպը երկբաղադրիչությունն է. եթե բարդ բառն իր կազմում ունենում է երկուսից ավելի արմատական բաղադրիչ, ապա դրանք բաղադրվում են ոչ թե միաժամանակ, այլ երկանդամորեն...» (Ջահուկյան 1989):

Անգլերենում N+N կաղապարով համադրական կառույցները, ինչպես հայերենում, գործառական մեծ բեռնվածություն ունեն (Lieber 2005): Որպես կանոն՝ անգլերենի բառակազմության մեջ ամենագործուն են երկու գոյականներից, երկու ածականներից կամ գոյականից ու ածականից բաղադրված կաղապարները, քանզի դրանք հեշտ են կազմվում ու հեշտությամբ

ընկալվում, իսկ ասենք՝ նախդիրներ և բայեր պարունակող բարդություններից մեծ թվով նոր բարդություններ չեն կազմվում (Jensen 1990):

N+N կաղապարով կազմվում են մեծ մասամբ գոյական բարդություններ, ինչպես նաև դրանց կոնվերսիայի եղանակով առաջացած բայեր, կան նաև փոքրաթիվ ածականներ: Այսպես՝ նշված կաղապարով կազմվում են.

ա) բարդ **գոյականներ**՝ *airline* «օդուղի», *applesauce* «խնձորախյուս», *benchmark* «չափանիշ», *goalkeeper* «դարպասապահ», *handwriting* «ձեռագիր», *headline* «վերնագիր», *keyword* «բանալի բառ», *necktie* «վզկապ», *needlework* «ասեղնագործություն», *tablespoon* «ճաշի գդալ» և այլն: Հետաքրքիր են *bookseller* «գրավաճառ», *timeserver* «իշխանություններին քծնանքով ծառայող մարդ», *brainstorming* «մտագրոհ», *handwriting* «ձեռագիր» տիպի բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչները բայանուն գոյականներ են /deverbal nouns/ (Архольд 1986): Նման բարդությունների համար կունենանք հետևյալ կաղապարները՝ [[book]_N[sell_v+er]_N]_N, [[hand]_N[write_v+ing]_N]_N և այլն: *Ing* վերջածանցով բառերը պատկանում են **(գոյական+գերունդ (գերունդիում))** կաղապարին, որը N+N կաղապարի ենթակաղապարն է, ինչպես՝ *glassmaking* «ապակեգործություն», *gunrunning* «զենքի ապօրինի ներմուծում», *peacekeeping* «խաղաղության պահպանում», *painstaking* «ջանադրություն» և այլն: Հայերենում գերունդով կառույցներ չկան:

բ) Այս կաղապարով փոքրաթիվ բարդ **բայեր** են կազմվում և հիմնականում՝ բարդ գոյականների կոնվերսիայի եղանակով (Adams 1973), ինչպես՝ *handcuff* «ձեռնաշղթա հագցնել», *honeymoon* «մեղրամիս անցկացնել», *pitchfork* «եղանով բարձրացնել», *sandbag* «բալաստով բեռնել», *sandpaper* «հղկաթղթով հարթեցնել», *shipwreck* «նավաբեկության ենթարկվել», *snowball* «ձնագնդի խաղալ», *wisecrack* «սրամիտ դիտողություն անել» և այլն:

գ) Բարդ **ածականների** թիվն ավելի քիչ է, օրինակ՝ *shipshape* «վայելույշ», *homestyle* «պարզ, անպաճույճ», *hourglass* «ավազի ժամացույցի ձև ունեցող», *saltwater* «ծովային, աղի ջրերի» և այլն:

N+N կաղապարով բարդությունների շարքում առանձին խումբ են կազմում բաղադրական *s* ձևությամբ տեսակները, որոնք փոքրաթիվ են և որպես մնացուկային տարրեր՝ անգլերենում պահպանվել են լեզվի զարգացման ավելի հին շրջանից: Տարածմանակալ հայեցակետով դիտարկելիս պարզ է դառնում, որ դրանց մի մասը ծագել է անգլերենի սեռական հոլովի հնագույն ձևի հիման վրա, ինչպես՝ *guardsman* «զվարդիական», *kinswoman* «ազգականուհի», *statesman* «պետական գործիչ», *swordsmen* «սուսերամարտիկ», *tradespeople* «առևտրականներ», կամ էլ հոգնակի թվի ձևից, ինչպես՝ *beeswax* «մեղրամուս», *plainsman* «դաշտաբնակ», *salesman* «վաճառող», *woodsman* «անտառապահ»:

վերջիններն ավելի քիչ են հանդիպում անգլերենում: Ժամանակակից անգլերենում այս բառերում առկա *s* մասնիկը կորցրել է իր նախնական իմաստը՝ չարտահայտելով ո՛չ սեռական հոլովի³ և ո՛չ էլ հոգնակի թվի իմաստ (Adams 1973): Այսպիսի բարդություններում որպես երկրորդ բաղադրիչներ հաճախադեպ են *man*, *woman* և վերջերս շատ տարածված *person* «անձ» գոյականները, որոնք կարող են դիտարկվել նաև որպես կիսա-

ծանց/ածանցակերպ, քանի որ բոլոր համանման բառերում դրանք իրենց կատարած դերով համարժեք են *-er, -or* գոյականակերտ վերջածանցներին, ինչպես՝ *spokesperson* «հոռետոր», *sportsman* «մարզիկ», *sportswoman* «մարզուհի» և այլն: *Man* բաղադրիչով այս բառերում *man-ը* արտասանվում է որպես [mən], այսինքն՝ շեշտված դիրքում չէ՝ ի տարբերություն, օրինակ, *mán-eater* «մարդակեր գազան» բառի, որում *man-ը* ոչ թե գործողություն կատարողին կամ նրա զբաղմունքն է մատնանշում, այլ ունի բուն «մարդ» իմաստը: Հայերենի բարդություններում անգլերենի *man, woman, person* բառերի դերում կարող է գործածվել *բան* գոյականը, որը նույնպես որոշ լեզվաբանների կողմից ընկալվում է որպես անանցակերպ, ինչպես՝ *արվեստաբան, բուսաբան, մարդաբան, ռճաբան, սրտաբան* և այլն (Գյուրջինյան 1998):

Ներկենտրոն և արտակենտրոն բարդություններ

Անգլերենի N+N կաղապարով կազմված բարդությունները մեծ մասամբ ներկենտրոն են, ինչպես՝ *armchair* «բազկաթոռ», *battlefield* «մարզադաշտ», *copyright* «հեղինակային իրավունք», *countryside* «քաղաքից դուրս գտնվող վայր», *cupboard* «պահարան», *daylight* «ցերեկվա լույս», *earring* «ականջօղ», *limestone* «կրաքար», *postbox* «փոստարկղ», *teapot* «թեյաման» և այլն:

Կան նաև նույն կաղապարով արտակենտրոն բարդություններ, որոնք, համեմատած ներկենտրոն տեսակների հետ, փոքրաթիվ են և մեծ մասամբ արհամարհական, ծաղրական իմաստներ ունեն, ինչպես՝ *birdbrain* «հիմար, հավի խելքով մարդ»⁴, *blockhead* «բթամիտ», *bonehead* «անուղեղ մարդ», *egghead* «գիտուն», *hunchback* «սապատավոր մարդ», *skinhead* «սափրագլուխ» և այլն:

Հայերենում ներկենտրոն են *դահուկավազք, նավաբանտ, նիզակամարտ, ծաղկակոթուն, ճուպանասանդուղք* և այլն, իսկ արտակենտրոն են, օրինակ՝ *բոցակն, բոցահեր, ծաղկահասակ* և այլ բարդություններ:

Բաղադրիչների միջև շարահյուսական-իմաստային հարաբերությունները

Կաղապարի բաղադրիչների միջև շարահյուսական-իմաստային կապի տեսանկյունից դրսևորվում են այն նույն հարաբերությունները, որոնք կարելի էլիներ դիտել համապատասխան բառակապակցությունների անդամների միջև: Այսպես, այս կաղապարով համադրական բարդությունների բաղադրիչները կարող են ունենալ.

ա) **որոշիչ-որոշյալի** շարահյուսական հարաբերություն՝ *cheesecake* «շոռակարկանդակ», *housework* «տնային գործ», *schoolboy* «դպրոցական տղա», *stoneware* «կավե ամանեղեն», *tearoom* «թեյասենյակ», *waxwork* «մոմարձան», *weeknight* «աշխատանքային օրվա երեկո»,

բ) **հատկացուցիչ-հատկացյալի** շարահյուսական հարաբերություն՝ *bottleneck* «շշի խցան», *doorpost* «դռան կողափայտ», *eggshell* «ձվի կճեպ», *eyeball* «ակնախնձոր», *fingertip* «մատի ծայր», *fishtail* «ձկան պոչ», *horseshoe* «ձիապայտ», *seashore* «ծովափ», *sheepskin* «ոչխարի մորթի», *shoelace* «կոշկաքուղ» և այլն,

գ) **խնդրային հարաբերություն**՝ *dressmaker* «դերձակ», *haymaker* «հնձվոր», *potholder* «խոհանոցային կտորե բռնիչ», *shoemaker* «կոշկակար», *storyteller* «հեքիաթասաց» և այլն:

Ինչ վերաբերում է Գ+Գ կաղապարով բարդությունների արտահայտած իմաստներին, ապա երկու լեզուներում կարելի է առանձնացնել դրանց իմաստային հետևյալ խմբերը՝ բարդություններ, որոնք արտահայտում են.

ա) տեղային, տարածական իմաստ. հայերենում՝ *գետահովիտ*, *գետահուն*, *դաշտաբերան*, *լեռնալանջ*, *լեռնադաշտ*, *սարածայռ*, *սարատեղ* և այլն, անգլերենում՝ *campground* «ճամբարատեղի», *forestland* «անտառապատ տարածք», *homestead* «կալվածատուն», *riverbank* «գետափ», *seashore* «ծովափ», *spacewalk* «ելք բաց տիեզերք», *staircase* «սանդուղք» և այլն,

բ) ժամանակային իմաստ. հայերենում՝ *այգաշաղ*, *այգացող*, *գիշերաբու*, *գիշերաթռչուն*, *լուսածեզ*, *տարեսկիզբ*, *ցերեկազգեստ* և այլն, անգլերենում՝ *daylight* «ցերեկվա լույս», *daytime* «ցերեկ», *nightclothes* «գիշերազգեստ», *nightlife* «գիշերվա կյանք», *nightmare* «մղձավանջ», *noonday* «կեսօր, միջօրե», *summertime* «ամառ» և այլն,

գ) նյութի ու դրանից պատրաստված առարկայի իմաստ. հայերենում՝ *բամբակագործվածք*, *բրդաթել*, *երկաթագամ*, *երկաթագլան*, *մետաքսագորգ*, *պղնձաբռնիչ* և այլն. սրանց դիմաց, ի տարբերություն հայերենի, անգլերենում մեծ մասամբ վերլուծական կառույցներ են՝ *leather glove* «կաշվե ձեռնոց», *paper bag* «թղթե տոպրակ», *silk stocking* «մետաքսե գուլպա», *steel door* «պողպատյա դուռ», *straw hat* «ծղոտե գլխարկ», *wood fiber* «փայտաթելք» և այլն: Միևնույն ժամանակ, եթե նշված վերլուծական կառույցներն անգլերենում համարվում են բարդ բառեր, ապա հայերենում, ընդհակառակն, դրանց համապատասխանությունները բառակապակցություններ են:

դ) Կենդանիներին և բույսերին առնչվող իմաստներ՝ *բաղաճուտ*, *բազեաճագ*, *գայլագռավ*, *եղեգնախունկ*, *լորաճուռակ*, *ծտաբզեզ*, *մկնաբազե*, *շնագայլ*, *շնխաղող*, *ննգեղջյուր*, *սալորաչիր*, *ուղտայծ*, անգլերենում՝ *buttercup* «հրանունկ», *cornflower* «տերեփուկ», *dogfish* «ծովաշուն», *dogwood* «հոնենի», *earthworm* «անձրևորդ», *earwig* «ականջմտուկ», *jellyfish* «մեղուզա», *mayflower* «մայիսյան ծաղիկ», *snowdrop* «ձնծաղիկ», *sunflower* «արևածաղիկ» և այլն,

ե) նմանության կամ համեմատության իմաստներ, երբ երկրորդ գոյականը բնորոշվում է առաջինի հետ ունեցած նմանությամբ, ինչպես՝ *ալիքաձև*, *գդալաձև*, *խարտոցաձուկ*, *նշտարաձև*, *շնաձուկ*, *սողաձուկ*, *վագրակատու*, *թրաձուկ*, անգլերենում՝ *catfish* «կատվաձուկ», *dragonfly* «վիշապաճանձ», *frogman* «գորտանման մարդ», *goldchild* «ոսկի երեխա (փխբ.)», *goldfish* «ոսկե ձկնիկ», *wiregrass* «լարանման թերթերով եղեգ», *swordfish* «թրաձուկ» և այլն:

Մեր թվարկած կառույցների մեծ մասում առաջին գոյական բաղադրիչները կարող են ընկալվել նաև որպես ածական, ինչպես՝ *daylight* «ցերեկային լույս», *goldfish* «ոսկե ձկնիկ», *paper bag* «թղթե տոպրակ», *mayflower* «մայիսյան ծաղիկ», *nightlife* «գիշերային կյանք» և այլն:

Անգլերենի N+N կաղապարով շատ բարդություններ փոխառու լեզուներում արդեն ոչ թե որպես բարդություններ են ընկալվում, այլ որպես պարզ բառեր: Օրինակ՝ անգլերեն չիմացողը ռուսերենում *коровой* և հայերենում *կովբոյ* բառերը կարդալիս չի հասկանա, որ դրանք անգլերեն *cowboy* «կովարած, նախրապան» (կազմված *cow* «կով» և *boy* «տղա» բաղադրիչներից) բառի պատճենումն են: Նույն

կերպ, եթե անգլերեն իմացողին *football* «ֆուտբոլ» բարդության *foot* «ոտք» և *ball* «գնդակ» բաղադրիչները հուշում են, որ բարդության իմաստն է «խաղ, որում ոտքով հարվածում են գնդակին», իսկ *basketball* բառի *basket* «զամբյուղ» և *ball* «գնդակ» բաղադրիչները ցույց են տալիս, որ բարդությունը նշանակում է «խաղ, որի ժամանակ գնդակը նետում են զամբյուղի մեջ», ապա փոխառու լեզուներում, օրինակ՝ ռուսերենում և հայերենում, футбол (*ֆուտբոլ*), баскетбол (*բասկետբոլ*) բառերն արդեն ոչ թե բարդություններ են համարվում, այլ պարզ բառեր, քանի որ фут (ֆուտ) և бол (բոլ) կամ բասկետ (баскет) և бoл (բոլ) բաղադրիչները որևէ իմաստ չեն արտահայտում ո՛չ ռուսերենում և ո՛չ էլ հայերենում (Мешков 1985):

Եզրակացություն

Հայերենի և անգլերենի գոյականական բաղադրիչներով համադրական բարդությունների զուգադրահամեմատական քննությունը ցույց է տալիս, որ դրանք ուսումնասիրության հարուստ նյութ են ընձեռում ոչ միայն իրենց կառուցվածքային առանձնահատկությունների, այլև բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերությունների և դրանց արտահայտած իմաստային առանձնահատկությունների տեսանկյունից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրաբարի մի շարք բարդություններում բացի *w* ձայնավորից՝ հոդակապի դերով առերևույթ հանդես են եկել նաև *t*, *n* և մյուս ձայնավորները (*օր.*՝ *հնգետասան, երկոտասան, ընդոժին* և այլն), որոնք, սակայն, ոչ թե հոդակապ են, այլ հնագույն շրջանից պահպանված ձայնավոր բներ (տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 55, տե՛ս նաև Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 263-265):
2. Բացի նշվածներից՝ Է. Աղայանը առանձնացնում է *t* հոդակապով բարդությունների ևս մեկ խումբ, որոնցում *t* հոդակապը կապվում է *tw* կամ *ju* (գրբ. եայ) վերջածանցի հետ, որը հետագայում ուղղակի կցվել, միացել է գոյականին, ինչպես՝ *բրոնզյա փայլ* > *բրոնզեփայլ* (տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 264):
3. Մեռականի ձևն անփոփոխ պահպանվել է միայն որոշ վերլուծական կառույցներում: Դրանցից կարելի է հիշատակել *death's head* «մահվան (մեռած) գլուխ» թիթեռի անունը, ինչպես նաև որոշ փոխաբերական բուսանուններ, ինչպես՝ *lion's snout* «առյուծի դունչ», *bear's ear* «արջի ականջ» և այլն (տե՛ս Է. Бортничук, И. Василенко, Л. Пастушенко, Словообразование в современном английском языке, Киев, 1988, էջ 134):
4. Նման բառերի կազմավորման մեջ բառակազմական վերջին քայլը զրո ածանցի ավելացումն է. դրանք Հ. Մարչանդը ներկայացնում է հետևյալ բանաձևով՝ «հիմար, հավի ուղեղով մարդ»-*birdbrain*-[[*bird+brain*]Ø], այսինքն՝ [[*հիմք+հիմք*]+գրո ձևույթ] կաղապարով. գրո ձևույթն այստեղ հավասարազոր է, օրինակ՝ *pigtailer* [[*pig+tail*]er] «հյուսք ունեցող» բառի **-er** վերջածանցին: *Birdbrain* տիպի բարդություններն այդ պատճառով ոչ թե իրական, այլ «կեղծ

(շինծու)» բարդություններ են, քանի որ դրանց կազմությանը մասնակցում է նաև ածանցումը, թեև ածանցը արտահայտված չէ (տե՛ս H. Marchand, *The Categories and Types of Present-Day English Word-Formation; A Synchronic-Diachronic Approach*, München, 1969, էջ 13-14):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան, Է. (1984), *Հնդհանուր և հայկական բառագիտություն*. Եր.: Երևանի համալս. հրատ.:
2. Աճառյան, Հ. (1957) *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3*. Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
3. Գալստյան, Ս. (2002) *Բուն (իսկական) բարդ և ածանցավոր բառերի կազմության քայլերի բանաձևման փորձ, ԲԵՇ N 1 (106)*. Եր.: Երևանի համալս. հրատ., էջ 107-109:
4. Գյուրջինյան, Դ. (1998) *Արդի հայերենի վերջածանցակերպները, ԲԵՇ, 2 (95)*. Եր.: Երևանի համալս. հրատ., էջ 71-79:
5. Կարապետյան, Ա. (2005) *Արդի համադրական կրկնավոր բարդությունների գնահատման հարցի շուրջ, ԲԵՇ N 1 (115)*. Եր.: Երևանի համալս. հրատ., էջ 67-76:
6. Հովսեփյան, Լ. (1987) *Գրաբարի բառակազմությունը*. Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
7. Մարտիրոսյան, Ա. (2007) *Արդի հայերենի նորարանությունների բառակազմական կադապարները*. Եր.: «Էդիթ Պրինտ» հրատ.:
8. Ջահուկյան, Գ. (1989) *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Եր.: ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
9. Մաքապետյան Ռ. (2006) *Արևմտահայերենի դասագիրք*. Եր.: Երևանի համալս. հրատ.:
10. Adams V. (1973) *An Introduction to Modern English Word-Formation*. London: Longman.
11. Akhmanova, O. (ed.) (1973) *Patterns and Productivity*. M.: Moscow State University.
12. Jensen, J. (1990) *Morphology: Word Structure in Generative Grammar*. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company.
13. Lieber, R. (2005) *English Word-Formation Processes. // Handbook of Word-Formation*. Dordrecht: Springer.
14. Marchand, H. (1969) *The Categories and Types of Present-Day English Word-Formation; Synchronic-Diachronic Approach*, 2nd ed., München: C.H. Beck.
15. Арнольд, И. (1986) *Лексикология современного английского языка*. М.: Изд-во “Высшая школа”.
16. Бортничук, Е.; Василенко, И.; Пастушенко, Л. (1988) *Словообразование в современном английском языке*. Киев: Изд-во “Выща школа”.
17. Мешков О. (1985) *Словосложение в современном английском языке*. М.: Изд-во “Высшая школа”.

Synthetic Compounds with Noun Constituents in the Armenian and English Languages

Synthetic compounds with noun components are widespread in the Armenian and English languages. There are both analytic and synthetic compounds of the noun+noun pattern. The aim of the given paper is to examine synthetic noun+noun compounds, their structural and semantic peculiarities in English and Armenian. The paper also studies the syntactic relation between the components of the compound words.

Синтетические сложные слова со существительными основами в армянском и английском языках

Синтетические сложные слова со структурой существительное + существительное достаточно распространены в армянском и английском языках. Данная модель имеет аналитические и синтетические формы. Целью статьи является детальное изучение сложных слов с моделью существительное + существительное, в частности, их структурные и семантические особенности в армянском и английском языках. В статье также изучаются синтаксические отношения между компонентами сложных слов.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrtyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrtyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // Investigations in Linguistics. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // The European English Messenger. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru